ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՈՐՔ, ՄԱՅԻՍ 1, 1895. ԹԻՒ 8 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 95

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West 23d St., New York, N. Y. Vol. V, 1895

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

Մի Հայ երիտասարդ—հարկ չէ անունն տալ—ՄԷԿ ՄԻԼԻՈՆ տոլար կ'ուզէ Ամերիկացւոցմէ, և այս՝ իբրեւ ազգային փոխառութիւն զոր Հայ ազգն յետոյ պէտք է վճարէ պարտքի պոնտերն գնելով։ Ամերիկացիք կարող են, երբ համոզուին, մարդասիրութեան համար առազին գումարներ հանգանակել, բայց նոցա յետինն անգամ գիտէ թէ ազգային փոխառութիւն ազգային կառավարութիւններն միայն կարող են անել և ոչ թէ այս կամ այն անհատն։ Ազգային փոխառութեան տոմսերն կը ստորագրուին կեդրոնական կառավարութեան կողմանէ և տարեկան տոկոս կը վճարուի փոխատուներուն։ Այսպէս գիտէ քաղաքակիրթ աշխարհ ազգային լոնի պայմանները։ Եւ շատ լաւ կ'անէ մեր եռանդուն ազգայինն եթէ Ամերիկացւոց մտքերն շփոթելու կամ ծիծաղն շարժելու բնութիւն ունեցող առաջարկներ չներկայացունէ նոցա։

Մեր ազգայինք ոմանք կը թուին կարծել թէ մեր քով ամեն տեսակ հայերէն գիրք կը գտնուի ծախու, և հրաման ու նոյն իսկ դրամ կը յղեն մեզի այս կամ այն գիրքն ուզելով։ այդ սխալ կարծիք է։ Մեր քով ծախու կը գտնուին միայն այն մի քանի գրեանն զորս մեք երկասիրած կամ հրատարակած ենք, որպէս ծանուցուած է ՀԱՅԿԻ մէջ։

Վերջերս կեղծ ստորագրութեամբ նամակներ կ'ընդունիմք, զորս հրատարակել կը մերժենք։ Պէտք է որ իրենց բուն անունն ևս գրեն թղթակիցք, թէպէտ չհրատարակուելու պայմանաւ, եթէ այնպէս կ'ուզեն։

Բարիզէն գրուած նամակն, զոր աւելի հեռուն պիտի գտնեն ընթերցողք, իրաւացի դիտողութիւն մի կ'անէ ժողովներու մէջ ճշդապահութեան հոգ տանելու մասին։ Հայոց ժողովն ի Նիու Եորք, Տր. Ուօրտի խօսելու երեկոյին, պարտէր սկսիլ ժամ 8ին ըստ ծանուցման։ Մեք գնացինք ճիշդ ժամուն և գտանք զօտարական հիւրն ներկայ, իսկ ժողովոյն հայ ծեռնարկուք բացակայ էին դեռ։ Ժողովն սկսաւ մերձ ժամ 9ին։

Այս անկանոնութիւնն կանոնի կարգ անցած է մեր մէջ։

Հասցէ

Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.

կամ Redaction de la Revue "HAIK" ին

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն Փրանք
կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական Նշմարք. — Հայկական Խնդիրն Ինչպէս պէտք է լուծել. Թէ Հայաստան Կրնա՞յ Ինքնօրէն Լինիլ—. Ներկայ Ստիպողական պարտքն. Եւրոպա և Հայաստան. Նամակ Կ. Պոլսէ.— Նամակ Բաղիշէ.— Հայաստան մերձ ի ճգնաժամ. Ապստամբութեան պատրաստութիւն. Խժդժութիւնք ի Հայաստան.— Թուրք, Հայ և Ամերիկացի.— Կեդրոնացման Խնդիրն Նիւ Եորքի մէջ.— Այլ և Այլք.

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ

Ի՞ՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԼՈՒԾԵԼ

ԹԷ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՐՆԱ՞Յ ԻՆՔՆՕՐԷՆ ԼԻՆԻԼ

Ա.

Մանչէսթըր Կարտիըն թերթին խմբագրականն, յորում կը յայտարարէր թէ Հայաստան ինքնօրէն չի կրնար լինիլ, ծանօթացուցինք մեր ընթերցողաց՝ ՀԱՅՔի նախորդ թուով։ Այդ խմբագրական գրըուած է ԿՐԻՆԻ գրքին քննադատութեան առթիւ։ «Հայկական ճգնաժամի» պատ-հեղինակն շատ համառօտ խօսած է «ինչ կրնայ անուիլ» մասին։ (եր. 68։) Յիշած է միայն հնարաւոր լուծման երեք յեղյեղուած կերպերն. այսինքն Ռուսական տիրապետութիւն— Հայկական ինքնօրինութիւն—վարչական բարեկարգութիւն։ Ինքնօրինութեան մասին նա սապէս կ'ասէ յերես 69 «երկրորդ լուծումն է Հայկական ինքնօրինութիւն, Պուլկարիոյ հանգոյն, քաղցր երազն ա՛յնոցիկ որք անգէտ են աշխարհագրական դժուարութեանց, ժողովրդի բնաւորութեան և բաշխման, և զգացման Ռուսիոյ ու այլ Տէրութեանց որոց միջոցաւ այդ պիտի հաստատուէր և պահպանուէր։» Այսպէս մերժելով ինքնօրինութեամբ լուծումն, կ'անցնի ասել թէ «Մնացած միակ եղանակն է արմատական և կորովի վարչական բարենորոգմունք որոց նախաձեռնութիւնն Եւրոպական պետութիւնք պէտք է ստանձնեն և տեղեկագրեն Դրան, փոխանակ ասոր հակադարձ կերպին՝ ըստ կարգադրութեան Պէռլինի դաշնագրոյն։»

Տիար Կրին, ցուցնելու համար թէ այս իւր առանձին կարծիքն չէ, կը յիշեցունէ թէ Անկլօ-Արմինիըն ընկերութիւնն, և Ամերիկայի Ֆիլ-Արմէնիք ընկերութիւնն միևնոյն հայեացքն հրատարակած են, թէ ինքնօրինութիւն չէ Հայոց խնդրածն այլ պարզապէս վարչական բարեկարգութիւն։

Ս. Պատրիարք Հայրն անցեալ օր առ Դուռն մատուցանելի երկար թագրիրին մէջ ամեն բան ասած էր, բայց զգուշացած էր խնդրոյն լուծման ո և է մասնաւոր եղանակ նշանակելէ։ Այդ լռութիւն խոհական և նշանակիչ է միանգամայն։

Այդ լռութիւն կը նշանակէ թէ իւր տեսութիւնն ի մասին լաւագոյն կերպին որով պէտք է վախճան տալ անբարեկարգութեանց, գերազանցապէս անհաճոյ և դժպհի է Դրան։

Կարելի է սակայն գուշակել թէ Սր. Պատրիարք, ինչպէս ամեն բանիմաց Հայ, այնքան բարեկարգութիւն կը սպասէ Դռնէն որքան ի փշոց խաղող։ Ի հարկէ Սր. Իզմիրլեան դեսպանաց հետ տեսակցելու ատեն այդ կէտ շատ անգամ պարզած է, կէտ որ այլուստ արդէն քաջ յայտնի է բովանդակ Եւրոպիոյ, մանաւանդ Սասնոյ դէպքէն ի վեր։

Ո՛չ, ո՛չ, այլ ևս Հայք Թուրք կառավարութեան «հայրախնամ» իշխանութիւնըն չեն ուզեր Հայաստանի վերայ։ Նա չափազանց դաժանօրէն մեր ետեւէն ինկած ու զմեզ պատառած է։ Հեռի՜ ի մէնջ այսուհետեւ Թուրք կառավարութիւն, յաւիտեանս յաւիտենից հեռի՜։

Եթէ Եւրոպացիք անողորմաբար բռնադատեն զմեզ այդ մեր յայտնի թշնամւոյն ձեռքին տակ մնալ, այն ուրիշ խնդիր է, բայց մեք, ե՛րբ և ո՛ւր որ պատե-

հութիւն լինի, ի լրագիրս թէ ի մեր դիմեցմունս առ Եւրոպա, պէտք է որոշ և յստակ և աներկբայելի շեշտով յայտարարեմք թէ այլ ևս մեք ոչ է գործ ունենալ չեմք ուզեր Թուրք իշխանութեան հետ։

Թող Եւրոպա լաւ գիտնայ թէ Հայոց ու Թրքաց միջեւ կռիւ ու կռիւ բնաւ չպիտի դադարին այսուհետեւ եթէ Թուրքն շարունակէ իշխել Հայուն։ Թուրքն 20 տարիէ ի վեր կը ջանայ ճմլել Հայու գլուխն ընդ ոտիւք, և Հայն կը խայթէ Թրքի գարշապարն. յայսմ հետէ պիտի տեսնուի թէ Հայն, զօրացած ու կազմաւորուած, աւելի վեր պիտի հասցունէ իւր հարուած, և պիտի զարնէ թշնամւոյն փորին, կրծոցն ու գագաթին իսկ։

Միայն մի բան կրնայ յանձն առնուլ Հայաստան, այն է տարեկան տուրք մի վճարել Սուլթանին, ինչպէս կարգադրուած էր Պուլկարիոյ համար ևս։ Անկէ անդին ոչ Թուրք փաշա և ոչ Թուրք օրէնք կրնայ ընդունիլ Հայաստանի սահմաններէն ներս։

Ուրեմն ո՞վ պիտի կառավարէ զՀայաստան։ Հա՞յք թէ օտարք։ Առաջին պատասխանն այս է. զՀայաստան Թող կառավարէ ոևէ ոք, բաց ի Թրքէն։ Թող կառավարէ Եւրոպական միջազգային համատիրութեան գործիչն, մի Եւրոպացի, Անգլիացի, Ռուս, Գերման, Ֆռանսացի իշխան, փոյթ չէ ո՛ր ցեղէն, բաւական է որ 61դ յօդուած ստորագրող Պետութեանց գէթ երեքն, Ռուսականն, Անգլիականն և Ֆռանսականն, համաձայնին այդ մասին։

Անցեալ օր երբ յՈւստրը այցելեցինք, «Թելեկրամի» ռիփորթերին այս իմաստով խօսեցանք և նոյն Թերթի մէջ տեղեկագրուեցաւ հետևեալն.—

«Տոքթոր Մ. Ս. Գաբրիէլեան, որ երէկ խօսեցաւ Ս. Փրկիչ եկեղեցւոյ ժողովոյն մէջ, ... «Թելեկրամի» ռիփորթերին հետ տեսակցութեան ատեն ասաց թէ ... Հայաստան, ազատութեան առաջին միջոցին, պիտի լինէր արբանեակն մի մեծ ազգի, հաւանօրէն՝ Ռուսիոյ։ Հայք, իբրեւ նախախալատրաստական քայլ, գոհ պիտի լինէին ներքին ազատութեամբ, այն է ինքնօրինութեամբ, առանց դաշնակցութեանց իրաւունքն ունենալու օտար կառավարութեանց հետ։ ... Այս պայմանաց տակ Թուրք կայսրութեան մէջ ցրուած Հայերէն պիտի գան ի Հայաստան, և այսպէս կազմեն համասեռ ժողովուրդ մի, որ ժամանակաւ պիտի լինի խարիսին ազգային պետութեան մի, թագաւորութեան կամ հանրապետութեան ձևին տակ։»

Այո՛, Հայոց բաղձանքն է հայ ազգային պետութիւն մի հաստատել. պէտք է զայս համարձակ յայտարարեմք աշխարհի։ Միայն թէ գիտեմք նաև որ նախապատրաստական ժամանակամիջոց մի պէտք է յորում Հայաստանի ժողովուրդն զտուի. օտար տարրերն դուրս ելնեն և հայ տարրն ներս անցնի։ Այս ժամանակամիջոց կրնայ տեւել տասն կամ աւելի տարիներ՝ սկսելով ներկայ տարիէս։ Այս տարի պարտ է Թուրք կառավարութիւնն «աղխով մաղխով» դուրս ելնէ Հայաստանէն — Վանէն, Մուշէն, Բաղէշէն, Կարինէն։ Այս տարի պէտք է Եւրոպայի իշխան մի ընդհանուր կառավարիչ կարգուի Հայաստանի, ընտրութեամբ մեծ պետութեանց։

Մեք աստ նոր կազմակերպութեան ծրագիր մի ներկայացունել չունիմք. միայն սկզբունքն կը նշանակեմք—թէ պէտք է Հայաստան՝ մեծ պետութեանց բարձր պաշտպանութեան ներքև՝ ունենայ քրիստոնեայ վարչութիւն և օրէնսդրութիւն։

Այդպիսի կարգադրութեան մի դէմ առարկութիւններ յարուցուած են, բայց կամ սխալ են կամ չափազանցուած։

Գերմանիոյ մէջ հայկական յուզում սկսած լինելով անցեալ ամիս՝ Թուրք պաշտօնեայ մի, Օսման Պէյ անուն ոմն, Միւնիխի Գրեմ. Ցայթունկին մէջ յօդուած մի հրատարակեց ցուցնելու թէ «Հայք երբէք անկախ ժողովուրդ մեղած չեն իբրև զՑոյնս կամ զՌումանիացիս կամ զՍերվիացիս։ Անկարելի է նոցա ինքնօրինութիւն տալ, կ՚ասէ, առանց յղելու նոցա բանակ մի Բուրդերն հպատակութեան ներքև պահելու։ Հայկական Պետութիւն չի կրնար կազմուիլ, կը խորհի, մեծամասնութեան կանոնով, բայց եթէ ռուսական և պարսկական հայաբնակ գաւառներն ևս կցելով Օսմանեան Հայաստանի։»

Թուրք պաշտօնեայն կրկնած է սովորական առարկութիւններ, միայն թէ զՌուսիա խրատուցանելու համար նոր միտք մ՚ալ ներմուծեր է, այսինքն թէ Հայկական Պետութեան մի գաղափարին իրագործումն Ռուսական Հայաստանն Ռուսաց տիրապե-

աութենէն հանել պիտի պահանջէ։

Այդ աղուիսական մտքին կը փութամք պատասխանել թէ Ռուսական Հայաստանն Ռուսի ձեռքէն հանելու ոչ հարկ կայ և ոչ փափաք, ընդհակառակն՝ Հայք յօժար են որ Օսմ. Հայաստանէն նոր բաժին մ'ևս հանուի Ռուսին՝ այն պայմանաւ որ Օսմ. Հայաստանի մնացած մասն ինքնօրէն նահանգի վերածուի։ Իրաւ է թէ Հայոց մէկ մասն կրնայ ռուսական բաժնէն դաղթել յինքնօրէն նահանգն, բայց ռուս տէրութիւնն մարդու կարօտութիւն չունի, այլ աշխարհագրական դրից առաւելութեան։

Բոլորովին ծաղրելի է նաև այն միտքն թէ Հայք եւրոպեան բանակի մի պէտք պիտի ունենան զԲուրդս զսպելու համար։ Սանոյ դէպքն քաջ կը հերքէ այդ խղճալի առարկութիւն։ Անդ Հայք իբր 2,000 քուրդ ջարդեցին՝ օսմ. բանակին միջամտութիւնէն առաջ, և Քուրդք այնպէս զարհուրեցան Հայոց կրակէն որ մերժեցին չարունակել պատերազմն եթէ կանոնաւոր զօրքն չհասնէին օգնութեան։ Հայք կարող են մէկ ամսուան մէջ կակղցունել Քրդերն՝ երբ կանոնաւոր և զինեալ գունդեր կազմեն։ Թող Օսման Պէյ և բովանդակ Եւրոպա հանգիստ լինի այդ նկատմամբ։ Թուրքիոյ մէջ չկայ ցեղ մի որ Հայոց հաւասարի զինուորական ընդունակութեան մասին։

Սովորական առարկութիւն մ'է նաև այն թէ Հայաստանի մէջ Հայք մեծամասնութիւն չեն կազմեր։ Այդ առարկութիւն յոյժ խախուտ է և վիճակագրական սխալ հաշիւներու վերայ հաստատուած։ Եւ յայնըմ է ահագին սխալն որ դոքա տուն կը հաշուեն և առ մէն մի տուն սաչափ բնակիչ, Հայ կամ քուրդ կամ Թուրք, առանց նկատելու թէ Թուրք և քուրդ ընտանիքն բոլորովին տարբեր են հայկականէն։ Թուրք տունն, միջին հաշուով, դուցէ հինգ անդամներէ կը բաղկանայ, նոյնպէս է քուրդ տունն, մինչդեռ Հայ տունն միջին հաշուով թերևս 15 անդամներ կը պարունակէ։ Թրքի և Քրդի ամեն արու որդին, ուստրն, որ կ'ամուսնանայ, զատ տուն կը լինի (էվ-լէնմէք), մինչ Հայոց կերպն հայրապետական լինելով՝ Հայրն և իր ամուսնացեալ ուստերք և թոռունք բոլորն միասին կը մնան, մինչև որ չորրորդ սերունդն ալ եկնէ և մեծ Հայրն մեռնի, այն ատեն բաժինք տեղի կ'ունենան։ Մեք Հայաստանի մէջ տեսած եմք 45 անդամէ կազմուած տուն, և նոյնպիսի չատեր լըսած եմք թէ կան։ 15—20 հոգւով ընտանիք հասարակ են։ Կը հետևցունեմք թէ Հայաստանի մեծ մասին մէջ հայ ցեղն ունելի բազմաթիւ է քան մահմետական ցեղերն ի միասին առած։

Բայց խնդիրն լոկ թուական չէ։ Բաղդատել պէտք է Հայն միւս ցեղերուն հետ իմացական, արհեստական, բարոյական տեսակետներով՝ հասկանալու համար թէ բարոյապէս որքան գերակշիռ է Հայն քան զայլ բոլոր ցեղերն։ Հայք են երկրագործ և արհեստաւոր, ինչ նշանաւոր բան որ կը շինուի երկրին մէջ, Հայու խելքով կը շինուի։ Հայք ունին վարժարաններ, ժողովրդի բաւական մէկ մասն ընթերցագէտ է, մինդեռ քրդերն գիր անգամ չունին և Թրքերն ունին այնպիսի գիր զոր սովրիլ չափազանց դժուար է։

Վերջապէս պէտք է նկատել թէ Հայաստան ոչ միայն անուամբ այլ և իրօք Հայոց երկիր է. ամեն կողմ եկեղեցի, վանքեր, յիշատակարանք, գերեզմանատունք, ուխտատեղիք, դիւղից՝ քաղաքաց՝ լերանց՝ դեռոց և դաշտաց անուններ բոլոր հայկական են։ Հայ ցեղին տունն է եղած այն երեք հազար տարիներէ ի վեր։ Միայն յետոյ աւազակ Քրդեր և զօշաքաղ Թուրք պաշտօնեայք եկած են հոն յափշտակութեան համար. Թուրքք և Քուրդք Հայաստանի բուն ժողովուրդն չեն, այլ մակաբոյծներն որք կապրին Հայու արիւնքն ծծելով։ Մեծ անիրաւութիւն և միանգամայն սխալ է այդ վնասակար տգրուկներն երկրին ճշմարիտ բնակիչ համարիլ և ասել թէ Հայաստան Հայոց երկիրն չէ։ Կան իրօք խաղաղ և մշակ փոքրամասնութիւն մի մահմետական բնակչաց ի Հայաստան, բայց և նոքա շատ գոհ և շնորհակալ կը լինին եթէ քրիստոնեայ վարչութիւն հաստատուի, որովհետև նոքա ալ չափազանց զզուած են յերեսաց Թուրք չարախոյժ և աւազակ կառավարութեան։ Շատ կը սխալին եւրոպացիք եթէ այնպէս կարծեն թէ Հայաստան բնակող ոչ-աւազակ մահմետականք պիտի դժկամակին քրիստոնեայ իշխանութեան ենթարկուելու։

Բ

Օտարականք միայն մէկ առարկութիւն կրնան փոքր ինչ իրաւամբ յարու-

ցանել հայկական ինքնօրինութեան գաղափարին դէմ. այսինքն թէ Հայք իրենք իրենց մէջ միաբան, համերաշխ չեն, նոցա առաջնորդք ինքնագլուխ են և իրարու կը նախանձին, և բաղադրուելու, միանալու և իբրեւ կառավարութիւն կրենց գործերը վարելու ընդունակութիւն չատ չեն ցուցներ։

Շատ փափաքելի է որ Հայք գործքով հերքեն զայս առարկութիւն։ Եւ յոյս մեծ ունիմք թէ անյապաղ պիտի հերքեն։ Արտասահմանի հայ գաղթականութիւնք այժմ ջերմ փափաք կը ցուցնեն կեդրոնական վարչութեամբ մի յառաջ տանելու իրենց հայրենասիրական գործունէութիւն։ Թուրքիոյ գաւառաց մէջ Հայք ժողով և հայրենասիրական միութիւն կազմելու դիւրութիւն բնաւ չունին. բայց գաղթական Հայք յԵրոպա և յԱմերիկա, յԵգիպտոս և ի Հնդիկս, ունին ամենայն դիւրութիւն։ Եթէ կեդրոն մի չունենան այդ ցրուեալ ընկերութիւնք, ոչ միայն չատ օգտակար չպիտի կրնան լինիլ հայրենեաց ներկայ ահաւոր պահուն, այլ և թշնամեաց փասա մի հայթայթած պիտի լինին թէ կազմաւորիլ չեն գիտեր, քաղաքական մարմին և վարչութիւն յօրինելու ընդունակ չեն։

Հարկ է մեզ ունենալ ազգային գոռաւոր կեդրոն մի յԵրոպա, ի Լոնտոն, ինչպէս ունիմք կեդրոն մի յԷջմիածին և կեդրոն մի ի Կ. Պոլիս։ Լոնտոնեան կեդրոնն պիտի լինի սիրտ մի որ արտասահմանի Հայութեան ոյժն ու նպաստն ցայտեցունէ պէտք եղած ուղղութեամբ դէպ ի մայր հայրենիքն։ Այդպիսի կեդրոնի մի բազմադիմի կարեւորութեան և հնարաւոր գործերուն վերայ ամեն բան պարզել ի դէպ չեմք համարիր։ Շատ բան կայ ասելու այդ մասին, զոր իմաստուն ընթերցողին կը թողումք մտածել։ Միայն կ'ուզեմք մի քանի առարկութիւններ հերքել կարճ ի կարճոյ։

Առաջին առարկութիւնն այն է թէ այժմու եղանակն լաւ է, թող չարունակուի։

Ո՛չ, բարեկամք, այժմու եղանակք անբաւական են։ Շատ լաւ են բաղդատմամբ 20 տարի յառաջագոյն եղածին, բայց խղճալի կերպով թոյլ են ներկայի ահաւոր ճգնաժամուն համեմատութեամբ։ Գրչի պայքարն անգամ թոյլ և անկատար է։ Շատ աւելի խօսիլ և գրել պէտք էր։ Եւ խօսիլ որոշ, վճռական քաղաքականութեամբ, գործել որոշ ուղղութեամբ։ Միթէ հայ ազգին կը վայլէ՞ Անկլօ-Արմինեան ընկերակցութեան կամ Ֆիլ-Արմէնիք ընկերութեան յայտնել իւր քաղաքականութեան և պահանջմանց յայտարարութիւնն։ Միթէ օտար ընկերութիւնք կրնա՞ն մեզ հասկանալ և մեր քաղաքականութիւնն որոշել։ Մինչև ե՞րբ մեր Ազգն, իբրև տխմար տղայ, օտարին բերանն պիտի նայի։ Եթէ կ'ուզեմք որ այս վճռական վայրկենին մեր հայրենեաց բաղդին վերայ ազդեմք Հայքս, պարտիմք հասուն և կարող հայերէ կազմեալ մի կեդրոն ունենալ ի Լոնտոն, որ խորհրդակցութեամբ ուրիշ ազգային կեդրոններու հետ, որդեգրէ կամ որդեգրել տայ որոշ ծրագիր մի, յստակ քաղաքական ուղղութիւն մի, և պարզ խօսի Եւրոպիոյ։

Այժմու եղանակք անբաւական են յեղափոխական գործունէութեան տեսակետով ևս։ Ահա Քննիչ Ցանձնաժողովոյ տեղեկագիրն պիտի մատուցուի և Եւրոպա պիտի ասէ իւր ասելիք։ Բնականօրէն Հայք սրտմտած այժմէն կը պատրաստուին զինեալ ցոյցերն աւելի ընդարձակ չափերով անելու եթէ Եւրոպա նորէն յուսավրէպ թողու զիրենք։ Եւ ո՞վ կրնայ այսուհետեւ յանդգնիլ յորդորել զհայ երիտասարդութիւն որ հանդարտ մնայ, ըսպասէ, համբերէ։ Բայց եկ տես որ յեղափոխական նոր շարժումներն, եթէ դժբաղդաբար հարկ լինի, պիտի գործուին սարսափելի սխալներով, զանազան և հակընդդէմ ուղղութեամբք, գոյնզգոյն կուսակցապետներու ձեռօք, քաղաքական աշխարհի զզուելի միջադէպներով արատաւորեալ ընթացիք, սարսափելի կորուստներով և երկբայական վերջաւորութեամբ։

Ինչ՞ դարման այժմէն կրնայ ձեռք առնուիլ յեղափոխական շարժմանց աւելի իմաստուն և նպատակայարմար ուղղութիւն և կազմաւորում տալու, եթէ ոչ մի կեդրոն կազմել որ իւր ղեկավարութեամբ և բարոյական ազդեցութեամբ զսպէ ծայրայեղներն, զգօնութիւն ներշնչէ անսկզբունք խիզախողաց, խորհուրդ տայ անձնուէր երիտասարդաց, երկմտեալ նուիրատուներու և կասկածոտ հարուստներու դրամական օգնութիւնն ընդունի և գործածէ աւելի վստահելի կերպով քան մին-

չև ցարդ եղած է զանազան կուսակցութեանց և անանուն գործչաց ձեռօք։

Ուրիշ առարկութիւն մ'ալ այն է թէ վստահելի և գործօն կեդրոն մի կազմելու համար Հնչակ, Ձերազ, Թումայեան և. չեն կրնար միանալ, «ի չհամազգեաց լծեալ կառք կը լինի» կեդրոնն։

Այդ առարկութեան կ'արժէ որ պատասխանեմք յառաջիկայ թուով, սակայն միայն ասելով այժմ թէ խնդիրն կեդրոնականացման սկզբունքն իրագործելու վերայ է, ոչ թէ անպատճառ այսինչ անհատներն կամ բոլոր կուսակցութիւններն ի մի ձուլելու։ Այսու ամենայնիւ մեք անյոյս չեմք թէ օգտակար միութիւն մի կարելի է կազմել առերևոյթս անհաշտ երևցող անձերով, որոց վերայ պէտք է յաւելուլ, պէտք է ջանալ յաւելուլ, մի կամ երկու նշանաւոր կարողութեան տէր Հայեր Թուրքիայէն կամ ի Ռուսիոյ։

ՆԵՐԿԱՅ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՊԱՐՏՔՆ

Բ

ԵՒՐՈՊԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Նախորդ գրութեամբ քննեցինք մեր ներկայ գործունէութիւնն, նկատեցինք զանազան պատճառներ որք կը շափաւորէին և պայմանէին զնորին զօրութիւն և օգտակարութիւն, և իշխեցինք անել սա ընդհանուր դիտաւածն թէ այն կախեալ կ'ուներ զՀայաստանի ապագայն զբարեհաճոյից կամ զքմահաճոյից Եւրոպիոյ որոյ միամամն վրայ այն չունի բնաւ շարժիչ ազդեցութիւն։

Հայ ազգն ցայսօր հաստատած էր զիւր ազատութեան յոյսն ի վերայ Եւրոպիոյ և զարմանալի չէ որ խորին անձկութեամբ կը սպասէ տեսնել թէ ինչ պիտի անէ այս ծայրայեղական և կարեւոր պահուս։

Եթէ կար մի ժամանակ երբ Հայոց վիճակն արտասովորաբար անտանելի էր, այժըմ է այդ։ Եթէ եղաւ մի քստմնեցուցիչ ոճիր որ ցնցէր զհամայն մարդկութիւն, այդ պատահեցաւ երէկ ի Սասուն։ Եւ եթէ կար մի ժամանակ երբ միջամտութիւնըն Եւրոպիոյ այնքան հարկաւոր էր որքան ակնկալելի, առանց սարակուսի, այսօր է այդ ժամ և ոչ վաղիւ։ Նմանապէս մեք արտասահմանի Հայքս արտասովոր ջանք արած եմք ըստ մեր ներկայ դրութեան որ է յուզել զհանրային կարծիս և անել դիմումներ առ պետութիւնս։ Ուրեմն, եթէ ներկայ տրամաբանութիւնն չիտակ է, պատճառ ունիմք յուսալու թէ մօտ է վախճանն Հայաստանի գերութեան։

Սակայն Եւրոպիոյ արդի կացութիւնն կը ներշնչէ՞ այդպիսի բանաւոր մի յոյս։ Եւրոպա պիտի միջամտէ՞ զօրութեամբ և կարգէ ի Հայաստան մի վարչութիւն որ ապահովէ զկեանս, զինչս և զպատիւ հայ ժողովրդեան։ Դիտեմք թէ Բօղպէրիի իշխանութիւնն խախուտ է և տապալումն ո և է ժամուս չպիտի լինի անակնկալ։ Մեր մեծ բարեկամն որ եթէ ուզէ կրնայ թէ զՀայաստան ազատել և թէ զԹուրքիա ջախջախել և որոյ աջակցութեան կրնամք վստահիլ, նախկին նախարարապետ Կլատսթոն, դժբաղդաբար ծերունի մ'է և հրաժարած է հանրային կեանքէ։ Եթէ պատահմամբ թօրիք հասնին իշխանութեան ի Բրիտանիա, հարցական պիտի լինի ընթացքն Պալֆուրի կամ Սալզպերիի։ Այս իրք չեն այնքան քաջալերիչ։ Դիտեմք նաև թէ Անգլիա չկարէ առանձին գործել։ Ներկայ առթիւս միւս պետութիւնք պաղ և զգուշաւոր կը դարձին։ Ռուսիա նոյնպէս մեղմիւ կը գործէ և մինչ իսկ զրույցք կը հրջին թէ մոռադիր չէ երբէք միջամտել Հայաստանի գործոց։

Գրութեանս շրջանէն արտաքոյ է քննել զայն քաղաքական պայմաններ որք կը հարկադրեն մի այնպիսի կացութիւն յեւրոպա։ Մի գլխաւոր պայման զոր մարթ է յիշել այս է թէ Եւրոպա չէ կարող անջատել զՀայ խնդիրն այն մեծագոյն խնդրէն որոյ մի մասն կը կազմէ։ Եթէ Եւրոպա համաձայնի ի վերայ վերջնական վիճակին Թուրքիոյ, դիւրին է տալ ըստ այնըմ մի լուծում հայ խնդրոյն։ Սակայն այս համաձայնութիւն դեռ գոյութիւն չունի և ուստի դժբաղդաբար կը դարուանակէ նախանձն և անձնասիրական շահուց բաղխումն որոց չնորհիւ փտած և զեղծ իշխանութիւնն Թրքաց դեռ կանգուն է։

Եւրոպայ քաջ գիտէ Թուրքիոյ վարչական վատթար վիճակն և թէ բարեփոխումունք հնարաւոր են միայն երբ դադրի Թուրք իշխանութիւնն։ Սակայն այս-

պիտի մի դադարում կը յարուցանէ խնդիրն թէ ո՞վ պիտի լինի առաջնորդող նոր վարչութեան մէջ: Հայկական Խնդրոյ լուծումն կը պահանջէ բնաջնջումն Սուլթանի ուղղակի իշխանութեան ի վերայ Հայաստանի: Մեր յարգելի բարեկամն, Մր Փ. Տ. Կրին, կ՚առաջադրէ որ Տէրութիւնք գործադրեն արմատական բարեփոխումներ, սակայն չի նշանակեր դոցա հանգամանքն: Վստահ եմք սակայն թէ եթէ գիտուն հեղինակն ձեռնարկէր այդ խնդրոյ քննութեան, կը յանգէր նոյն համոզման թէ միակ բարւոքումն զոր ներկայ կացութիւնն կը պահանջէ է անմիջական և իսպառ դադարումն Թրքաց ուղղակի պաշտօնէութեան ի Հայաստան: Այս է նախնական և հիմնական պայմանն, ինչ և իցէ ձեւն նոր վարչութեան և ով որ իցէ առաջնորդող մարմինն կամ տէրութիւնն: Մարթ է զայս անուանել ինքնօրինութիւն, սակայն, որպէս Մր. Կրին կը կարծէ, եթէ ինքնօրինութիւնն գործնականապէս երազ մ՚է, յոյսն թէ հնար է Թրքաց իշխանութեան տակ ներմուծել ուէ բարեփոխում զարհուրելի պատրանք մ՚է: Խնդիրն այս է թէ ի՛նչպէս կարելի է պաշտպանել զմարդկային տարրական իրաւունքն ի Հայաստան, և եթէ այդ հընար է առանց զնահանգն վերածելու ինքնօրինութեան, առարկութիւն չկայ: Բայց այդ հնարաւորութեան երաշխիքն կը պակասի և մեք կ՚ստիպումք կրկնել թէ միակ դարմանն է վարչական անջատութիւն և անկախութիւն հայ գաւառաց: Եւ զայս Եւրոպա պարտի գործադրել եթէ կամի վախճան տալ անիշխանութեան ի Հայաստան:(1)

Հեռագիրն երեկ ծանոյց թէ Եւրոպեան պետութիւնք մատուցած են առ Դուռն մի ծրագիր բարեփոխմանց և յորդորած են զնորին անմիջական գործադրութիւն: Այս քայլին հետեւանքն կարող եմք գուշակել: Դուռն պիտի դիմէ զանազան փախստեանց և վերջապէս բոլորովին մերժէ զԵւրոպայի պահանջն: Անցեալ արձանագրութիւնն Դրան պարտէր ուսուցանել Եւրոպայի թէ համոզել և բարեփոխել զայն անյուսալի գործ մ՚է: Եթէ Տէրութիւնք կը տեսնեն թէ Հայաստանի բարեփոխումն մի պահանջ է, պարտին զայն գործադրել առանց զիջանելոյ և վերստին հայցելոյ զբարեհաճութիւն յամառ, զեղծ և չգէտ պալատական ակմբին ի Կ. Պոլիս: Այս նկատմամբք մեք չեմք նայիր իրաց ընթացքին յուսալիր աչօք: Ի՞նչ օգուտ եթէ ապացուցուի դժոխային վիճակն Հայաստանի, եթէ հարկ էր նոր ապացոյց, և ի՞նչ օգուտ ներկայել Դրան մի ծրագիր, որ եթէ կարեւոր ինչ է անպատճառ պիտի մերժուի անտի: Զօրական միջամտութիւն հարկ էր ի սկզբան, և նոյնըն հարկ էր հիմայ ի գործադրել զայդ ծրագիր: Եւրոպա զիջաւ ի սկզբան և առիթ տուաւ Դրան ցուցնել զիւր անմեղութիւն: Այժմ երբ դրան ժանտ քաղաքականութիւնն մերկացած է վերստին, պիտի առնո՞ւ ո և է գործնական քայլ վախճան տալ նմա: Կամ թէրեւս լռիկ բողոքով և անոյշ յորդորանօք չատանայ որպէս եղաւ 1881ին և 1891ին: Եւ այսպէս Հայոց տառապանք չարունակեն մինչև որ ազգն փճանայ և անհետանայ:

Մեք մեր անդամալուծական գործունէութեամբ և խելագարական ցնցմամբք պատրաստ եմք մեղադրել և պարսաւել զԵւրոպա, բայց խորհուրդն թէ մեծ չափով մեք եմք պատասխանատու և մեր ընթացքն է պախարակելի թուի թէ սակաւուց միայն կը ներկայանայ: Այսքան ամաց հետէ մեր գործունէութեան նպատակն եղած է յուզմամբք և բողոքարկութեամբք հրաւիրել եւրոպեան օգնութիւն: Մեք մերժած եմք նկատել զպայմաններն ընդ որովք միայն այդպիսի օգնութիւն հնարաւոր է և երբ օգնութիւնն հասած չէ, իբրև անիրաւեալ ազգ մինչև յերկինս բարձրացուցած եմք զմեր բողոքոյ աղաղակն: Հայ ազգն արդարեւ վեհ փառս մ՚ունի և, բաց աստի, Հայ ազգն զօրութիւն մ՚է զոր Եւրոպա չկարէ անտեսել եթէ միայն կարող առաջնորդութիւն և ընտիր կազմակերպութիւն չպակասի մեզ: Մեք նախապատրաստուած եմք աղմուկ հանել առ օտարս և վստահիլ բաղդին և պարագայից և ձգել զնաւակն աշխարհի ալեաց և հողմոց, քան ապահովել զյաղթութիւն Հայ փառաց յամր սակայն ստոյգ ուղղութեամբ, պատրաստել զմեզ ժամանակի վտանգաց, և զեկավարել զժողովրդական նաւն յապահով վախճան:

ՏԻԳՐԱՆ ՍԻՒՆԻ

(1) Մանչէսթըր Կարտեընի յօդուածն բոլորովին կը հաստատէ զիմ երկիւղ թէ Կրինի առաջադրած լուծումն միայն պիտի օգնէ անլոյծ թողուլ զխնդիրն և ոյժ տալ Դրան փախստեանց: ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս, 10 Ապրիլ, 1895

(Մեր յատուկ թղթակցէն)

Անգլիոյ պահպանողական կուսակցութիւնը այսր յղեց իբր իւր ներկայացուցիչըն զՓէլ Մէլ Կազէթի տնօրէնն, որպէս զի տեսակցի Սուլթանին հետ և ըսէ նմա թէ «Հայկական Խնդրոյն մասին Անգլիոյ յուզումն միայն ազատականաց և Կլատսթօնի գործն չէ, որպէս ինքն կը կարծէ, այլ թէ այս խնդրոյ մասին բոլոր կուսակցութիւնք համակարծիք են, և պէտք է Հայոց ինքնօրինութիւն շնորհել։» Անգլիական դեսպանն չթոյլատրեց որ ներկայանայ, միջոցն խիստ համարելով, և պատուիրակն վերադարձաւ։

Անգլիոյ դեսպանին Սուլթանին վերջին ներկայացման (4 Ապրիլ) առթիւ, ինքնակալն ըսած է, «Համոզուած եմ որ իմ պաշտօնեաներս սխալներ և յանցանքներ գործած են ի Սասուն, քննութիւնք ամեն ինչ երեւան պիտի հանեն և յանցաւորք պիտի պատժուին.» և կը յաւելու «Այս հայ գտնուող երեք գաւառաց ընդհանուր կառավարիչ պիտի կարգեմ մի յարմար կուսակալ։» Դեսպանն կը պատասխանէ թէ «Պէտք եղածն մենք պիտի առաջարկեմք։»

Թօգաթէ անցնող հանապարհորդ մը կը պատմէ թէ մորթուած Հայ մի տեսած է, կան շատ մեռեալք և վիրաւորք։ Հակառակ կառավարական ջանից Հայք չեն ուզեր խանութնին բանալ։

Դուռն տեսնելով թէ բանտերէ արձակեալ կղերականք չեն հաճիր Կրօնական ժողովոյն առջեւ հաւատարմութեան երդում ընել, կ'առաջարկէ պատրիարքին՝ Մինիր Պէյի միջոցաւ՝ որ առ Սուլթանն մի շնորհակալութեան ուղերձ գրկէ։ Պատրիարքն պաղ արեամբ կը պատասխանէ, «եթէ յանցաւորք էին, կը ցաւիմ զի կայսերական կառավարութիւնն առանց հարկ եղած պատիժներն տնօրինելու արձակեց, և եթէ անմեղք էին՝ կառավարութիւնն պարտի օրինաւոր հատուցում ընել նոցա՝ այնքան երկար ժամանակ անմեղներն բանտարկելուն համար։» Սուլթանն այս երկսայրաբանութիւնն լսելով կը կատղի։

Վերջերս Փորթուգալ Միքայէլ փաշան սնտուկ մի կ'ընդունի, յորում կը գտնէ ապագայ հայ սպայից պատրաստ համազգեստներ, Սասնոյ կոտորածին գունաւոր պատկերներն, Հայկական խնդրոյ մասին հրատարակեալ կարգ մը շրջաբերականներ, ի մէջ այլոց Պատրիարք Իզմիրլեանի Սուլթանին հետ թուղթ խաղալու ծանօթ նկարն։ Միքայէլ փաշա սարսափահար կը տանի Սուլթանին և կ'արժանանայ Օսմանիյէի առաջին շքանշանին։

Կ'ըսուի թէ վաղն դեսպանք խորհուրդ մը պիտի ընեն ի Մեծ Կղզի։

Սուլթանն կամք յայտներ է որ Գօնկրէսն Լօնտոն կատարուի՝ որպէս զի Հայք չկրնան ճնշում բանեցունել պատուիրակաց վրայ։

Բանկալթիի ոճրագործ ճանչուած Զաֆրանպօլուցի Մուստաֆան Եղեռնադատ Ատենի կողմէն դատապարտութեան վճիռ ընդունած էր։ Դատն յղուեցաւ Վճռաբեկ Ատենին, որ որոշեց թէ Մուստաֆա կանխամտածութեամբ չէր գործած ոճիրներն։

ՇՄՎ

ՆԱՄԱԿ ԲԱՐԻԶԷ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Պ. ՉԵՐԱԶԻ

Բարիզ. 17 Ապրիլ, 1895

Պարոն Մինաս Չերազ Գաղիոյ քանի մը քաղաքաց մէջ ծափահարուելէն վերջ, Բարիզի մէջ ևս զինքն ծափահարելու առիթն ունեցանք, ամսոյս 8ին՝ երեկոյեան ժամ 9ին, Աշխարհագրական ընկերութեան մեծ սրահին մէջ։ Ներկայ էին ընտիր դասակարգէն գրեթէ 700ի չափ ունկնդիրներ, որոց բաւական մէկ մասն հայերէ կը բաղկանար։ Երեկոյթին նախագահեց Գաղղիոյ Լուսինեան քաղաքին և դղեկին Պայզլյլ անուամբ ներկայացուցիչն՝ հրաւիրմամբ Մեծ. Իսկէնտէրի։ Պ. Չերազ նախ Հայաստանի և Հայոց վրայ խօսեցաւ և յետոյ մոգական լապտերով ազգային պատկերներ ցոյց տուաւ։

Ընդհանրապէս խօսելով երեկոյթն շատ աղէկ անցաւ։ Պ. Չերազ գոհացուցիչ կերպով և մաքուր գաղղիերէն լեզուով խօսեցաւ. ծափահարութեանց և կեցցէներու նայելով հանդիսականաց մէջ համակրութիւն յայտնողներ շատ կային։ Միայն կը

համարձակիմ երկու դիտողութիւն ընել. մին՝ մենք կը կարծենք թէ աւելի աղէկ կ'ըլլար եթէ ճիշդ որոշուած ժամուն, այն է 8ուկիսուն սկսէին փոխանակ 9ին. երկրորդ՝ բաղձալի էր որ Հայք աւելի Կաղղիացւոց ձգէին ծափահարելու խնամքն քան թէ իրենք նոյն իսկ անպատշաճ տեղն ծափահարէին։ Այս երկու փոքրիկ ծապակասութիւններն յիշելով, պէտք է ըսենք թէ բուն բանախօսութիւնն կատարեալ եղաւ։

Այս երեկոյթին մէջ աղմուկ հանելու և խանգարելու պաշտօն ունեցող Եըլտըզականներ ալ կային, վարձուած ապականեալ արարածներ, որոց մին, ամենէն թեթեւամիտն, երբ Պ. Զերազ Սասունի կոտորածին պատկերն կը բացատրէր, համարձակեցաւ ուլել. և ուրիշ մի ևս որ խելքով առաջինէն նախապատուելի չէր, ճիշդ Սպանիացւոց կովերուն գաղղիերէն խօսելուն նման a bas, (անկցի) պօռալու ջանաց շատ մեղմ ձայնով, բայց այդ երկու դողդողացող մնչիւններն կեցցէներու և ծափահարութեանց սարսափելի դղրդումի մը մէջ այնչափ տեղ գտան որչափ փոքրիկ կաթիլ մը ադտոտ ջուրն պարզ և վըճիտ ակագին ովկիանին մէջ։

ԱՇՈՏ ԵՐԿԱԹ

Հայկական Դատին ծանօթ ջատագովներէն մին, Տր. ՈՒՕՐՏ, որ գիտուն հնախոյզ մ'է և խմբագիր Նիու Եորքի «Ինտիտիփէնտէնթ» շաբաթաթերթին, Հայոց ժողովի մի ատենախօսեց Ապրիլ 20ին, յայտնելով ջերմ համակրութիւն և խրախոյս ներշնչելով ներկայից։ Նա յայտարարեց թէ՝ իբրեւ խմբագիր՝ հանրութեան բազկերակն կը զգայր և կարող էր ասել թէ այս յուզմանց վախճանն բարի պիտի լինի։ Թուրքիոյ մէջ քրիստոնէից արիւնն ի զուր թափուած չէ յանցելումն, և այս անգամ ալ ի դերեւ չպիտի ելնեն զոհողութիւնք։ Վստահացոյց թէ Ամերիկայի ժողովուրդն այնքան խորապէս զգացուած է Հայոց աղէտներովն որ եթէ ունենար ինչ պատեհութիւն որ Անգլիա ունէր և Եւրոպական Տէրութիւնք ունին, ազդուագոյն եղանակաւ պիտի ջանայր լուծել այս խնդիրն։

Գիտուն խմբագրին ատենախօսութիւնն յաճախ ընդմիջուեցաւ ներկայից ծափահարութեամբ և ի վերջ բանիցն բոլոր ժողովականք յոտնկայս «կեցցէ Տր. Ուօրտ» գոչեցին երեք պնդամ։

(Էսսօշիէյթէտ Փրէսի թղթակցէն)

(Մարտ 15)

ՀԱՅԱՍՏԱՆ ՄԵՐՁ Ի ՃԳՆԱԾԱՄ

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Պարտ անձին կը համարիմ հրապարակել Հայկական խնդրոյ մէկ վիճակն այնքան ծանր և տագնապեցուցիչ, որոյ առընթեր թուրք Բննիչ Ցանձնաժողովոյ գործն, և նոյն իսկ Սասնոյ կոտորածին մանրամասնութիւնք քիչ կարեւորութիւն ունենալ պէտք է թուին։ Երկար չրջագայութեամբ վստահելի տեղեկութիւններ ըստացած լինելով ի վիճակի եմ բաւական դրական կերպով ասելու թէ Հայաստան որոշած է տալ այնպիսի հարուած մի որ պիտի նշանակէ ազատութիւն կամ ջընջումն։

Իրօք Հայաստան կը պատրաստուի ի պատերազմ։ Ցեղափոխական կուսակցութիւնն այժմ ե՛ւ դրամունի ե՛ւ հրացան։ Ցընթացս անցեալ ութ եօթնեկաց դրամն անընդհատօրէն աղբերացած է Պաթումի, Տփղիսի, Բագուայ, Երեվանի, Էջմիածնայ և այլ ռուսական հայ գաղթականութիւններէն դէպ ի յեղափոխական սնտուկն։ Ես ինքնս տեսայ այս գանձի նշանաւոր մէկ մասին հանգանակումն հրապարակաւ, և լսեցի ալ թէ հարուստ վաճառականներ առանձին հանգանակութիւններ արած են՝ աւելի ևս տալու խոստմամբ եթէ պիտանայ։

Ծրագրին կեդրոնական գաղափարն է բոլոր Հայոց ընդհանուր ոտքի ելնելն թրքական կայսրութեան մէջ՝ յառաջիկայ Մայիսին։ Ճիշդ թուականն պիտի որոշուի յետոյ (Ապրիլին։) Հազիւ հաւանական է որ յարուցումն ընդհանրական լինի ի սկզբանէ, թէպէտ հետեւորդ դիպուածք կրնան սարսիլ ողջոյն հայ ազգաբնակութիւնն ի Փոքր Ասիա կռուիլ ինքնապաշտպանութեան համար։

Առաջնորդներն խոստացած են Հայաստանի արեւելեան մասին մէջ գանուողժողովրդին թէ գլխաւոր յարձակումն ի Կ. Պոլիս տեղի պիտի ունենայ, բայց այս կրնայ վարպետութիւն մի լինիլ խրախուսելու համար սրտաթափ Հայերն Վանայ, Բաղիշոյ և Մշոյ։ Հայք առ նուազն 3,000

մարթինի Հէնրի հրացան ունին՝ թագուցուած ոչ շատ հեռու Վանայ Ծովէն։ Զէնքըն հին տարուեան Թուրք զօրաց գիտութեամբ, որք կաշառք կրծելով թոյլ տուին փոխադրութեանն։ Յեղափոխական գործիչներ և փախստականներ կրնան ազատօրէն Հայաստան երթալ գալ իբրեւ ուղտապան կամ ջորեպան։ Թեհրանի մէջ մեծ գաղտնիք չէ թէ հոն Հայեր յաճախ ուղտ գնելով կը յղեն ի Հայաստան։

Շատ նշանակիչ պարագայ մ'է և այն թէ Սասնոյ փախստականք որ յէջմիածին՝ պատրաստուած են վերադառնալ ի Հայաստան, և վերադառնալ հրացան ի ձեռին։

Հայ դաւադրաց նպատակն չէ զԹուրքիա կակղցունել բաց պատերազմով, այլ խնդրոյն լուծումն ձեռք բերել եւրոպական տէրութեանց միջամտութեամբ։ Յեղափոխութիւնն դեռ երեք ամիս չանցած՝ տէրութիւնք, կը կարծուի, պիտի հարկադրին միջամտել, որովհետև անգթութիւնըն, խժդժութիւնն, բռնաբարումներն, արիւնարբութիւնն և խողխողմունք այնքան ահաւոր պիտի լինին որ քրիստոնեայ մարդկութիւնն զայրագին պիտի պահանջէ որ վերջ տրուի։ Յայնժամ Հայաստան, որպէս կը յուսայ ժողովուրդն, կրնայ ըստանալ իւր ազատութիւն, և Թուրք կայսրութիւնն յօշ յօշ պատառուելով բաշխուիլ ակնկալու դրացեայն։

Սակայն անպաշտպան կանայք և մանկունք պիտի կրեն վիշտ և ջարդուին հազարներով։ Եւ զայս պարագայ, իրօք, իբրեւ կարեւոր գործօն ի հաշիւ կ'առնուն առաջնորդք։ Հայք կը քաջալերուին այն հաւատով թէ առաջնորդք գաղտ հասկացողութեան մ'եկած են Ռուսիոյ հետ, բայց այս անհաւանական է։ Եւ ի մերձենալ յեղափոխական շարժմանն, Հայոց Կաթողիկոս Վեհ. Խրիմեանի խօսքն աւելի նշանակիչ կը լինի. «Հայաստան դառն նեղութեան մէջ է. բայց իւր վիշտք շուտով պիտի վերջանան։»

MISS ALICE STONE BLACKWELL

Այս ազնուամիտ ամերիկուհին անգամ մի ևս ապացուցած է թէ ինքն Հայոց անմոռանալի բարեկամն է։ The Woman's Column շաբաթաթերթին, որոյ խմբագիրն է մեր գրագէտ բարեկամն, 14 րդ թիւն ամբողջապէս նուիրեր է Հայ դատին ջատագովութեան՝ Կրինի պատուական գրքին վրայ երկար գրաքննութիւն մ'ընելու առթիւ։

ԽԺԴԺՈՒԹԻՒՆՔ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԹԱՅՄԶԻ

(տես նախորդ թիւն)

ԱՌՈՒՄՆ ԱՆՏՈՔԱՑ։ Տալւորիկի և Շատախայ մէջտեղ կայ մեծ լեառն անտառ։ Յայտնապէս մարած հրաբուխ մ'է այն, զի ի գագաթան ունի ընդարձակ փոս կամ սկաւառակ մի։ ստորոտն շատ կողմէ սեպաձեւ ապառաժներ կան և կողերն բազում ուրեք անառապատ են։ Առատ ռազմամթերօք և պաշարով կրնայ փոքր գունդ մ'ալ անառիկ գործել զայն։ Գիւղից ոչ սակաւուց բնակիչք, հօտերով հանդերձ, յԱնտոք փախած ապաստանած էին։ Զօրքն և Քուրդք պաշարեցին լեռն։ Քուրդք նախ սպառել տուին ռազմամթերքն, և ապա, Ամար անուն Բադրանցի Քուրդն գտած լինելով գագաթ տանող շաւիղն, յանկարծ առաւօտ մի կանուխ զօրքն կը վերելակեն ի գագաթն, և կը բոլորեն փոսն մինչդեռ հէք ապաստանեալք անխրազեկ էին։ Ո՞վ կարող է նկարագրել ճգնաժամական այդ ահաւոր պահուն հազարաւոր հագագներէն արձակուած յուսահատ ճիչն ու աղաղակն։ գընդակ, սուլին և սուր կը գործեն իրենց մահացու գործն։ Կ'ասեն թէ 4 կամ 5 հազար սպաննուեցան հոն, ես չեմ կարծեր թէ թիւն աւելի էր քան երկու հազար։ Այս յարձակումն կը թուի տեղի ունեցած լինիլ Սեպտեմբեր ամսոյ առաջին եօթնեկում, կամ գուցէ Օգոստոսի վերջին օրն, Սուլթանի գահակալութեան տարեդարձի օրն...։ Այս եղաւ գործնականօրէն վախճանն պատերազմին։ Զինուորք սակաւին որոնեցին աստ անդ մոլորեալ զոհեր, բայց մանաւոր ջանքն էր գտնել զՄուրատ Էֆէնտի և իւր ընկերքն, զորս վերջապէս գտան քարանձաւի մի մէջ և ձերբակալեցին։ Եօթն նորաձև հրացաններ և մի քանի ռումբեր գտնուեցան այդ 11 մարդոց քով։ Չեմ կարծեր թէ Հայք աւելի քան 100 կամ 200 այդպիսի հրացան ունէին ընդ ամենն։

Ո՛ՐՔԱՆ ՀԱՑՈՒՀԻՔ ԳԵՐԻ ՏԱՐՈՒԵՑԱՆ

Ոչխարի, արջառոյ, կարասւոյ կապուտ կողոպուտէն ի զատ, Քուրդք մանաւոր գործունէութիւն ցոյց տուին կին և տղայ

առեւանգելու։ Միայն Բագրանցի ցեղն, կ'ասեն, առաւ տարաւ 400 կին, թո՛ղ զմանկտին։ Կարծեմ ապահով է ասել թէ Քրդաց և զօրաց, և մանաւանդ զօրաց սպայից կողմէն, յափշտակուած կանանց և մանկանց թիւն 1,000 կայ։ Զելանի Շէյխըն ընդունեցաւ մէկ ուրթերորդն ողջոյն կողոպուտին զոր հաւաքած էին իւր ձեռքի տակ գտնուող ցեղերն։ Իրեն բաժին ինկաւ 860 ոչխար և այծ, 40 ջորի, 33 ընտիր կով, 3կամ 4 մատակ ձի, բացի հանդերձեղէնի, գորգեղէնի և անօթներու մեծաքանակ կողոպուտէն։

ԹՇՆԱՄԵԱՑ ԿՈՐՈՒՍՏՆ։ Շէյխն յայտարարեց թէ իւր 14,000 կամ 15,000 մարդոցմէն 1,200 սպաննուած էին։ Ասաց նաև թէ 150 զինուոր սպաննուած էին։ Քուրդ Աղա մի, որ քովն նստած էր, բացագանչեց, «ինչ՞ կ'ասես, 400 կամ 500 մեռած պէտք է լինին։» Կառավարութիւնն յօժար չերեւիր ընդունելու թէ ոեւէ զինուոր սպաննուած է. ինձ կը թուի թէ 150 կամ 200 սպաննուած զօրականին մեծ մասն իրենց մահն գտան մինչ կը մարտնչէին իբր Քուրդ ծպտեալ՝ Քրդերուն ընկերացած։ Քուրդ և Թուրք մարտիկներուն կարծեմ իբր 2,000ն սպաննուած են։ Գործոն կռուի տեւողութիւնն երեք եօթնեակ կը կարծեմ, թէև կանոնաւոր զօրքն 50 օրի չափ մնացին, կանոնաւոր զօրաց թիւն 15,000 և Քրդացն 20,000 գոլով, 20, կամ 30 թնդանօթօք հանդերձ։

ՀԱՅՈՑ ԿՈՐՈՒՍՏՆ։ Ճշդամերձ թիւ մի գտնել անհնար է։ Կարծեմ ճշմարտութիւնն մօտ է 10,000ի, թէպէտ «ոչ» չեմ կրնար ասել անոնց որք 16,000 կը դնեն թիւն։ Մարթուածներն, գերի առնուածներն և չքաւորեալներն իմիասին առած՝ կրնամ ապահովապէս 30,000 դնել զոհերու ամբողջական թիւն։

ԿԼԱՏՍԹՈՆԻ լուսանկարն թրքական սահմանագլխոյն վերայ կալանաւորեր են այն պատճառանօք թէ խռովայոյզ գրականութիւն է և չի կրնար Թուրքիոյ մէջ մտցուիլ։ «Ն. Ե. Թրիպիւնն» կը խորհի թէ ի փոխարէն պէտք է Սուլթանին լուսանկարն չընդունիլ Անգլիոյ մէջ, և այս մերժումն պէտք է լինի, կ'ասէ, ոչ գրական կամ այլ քմածին պատճառաւ, այլ միայն և պարզապէս անոր համար որ նա այնպիսի Թուրք մ'է և կը թողու որ այնպիսի գարշելի բաներ տեղի ունենան իւր թագաւորութեան մէջ։

ԹՈՒՐՔ, ՀԱՅ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՑԻ

Միացեալ Նահանգաց Քարտուղար Տիար Կրէշէմ յանդիմանած է զԹէրէլ, Կ. Պոլսոյ ամերիկեան դեսպանն, որպէս կ'երեւի 1894 տարւոյ պաշտօնական թղթակցութեանց հատորէն, յորում Ամերիկայի և Թուրքիոյ միջև թղթակցութիւնք աւելի քան 100 երես լցած են։

Կրէշեմ կը գրէ Թէրէլի. «Մասնաւորապէս կը ցաւիմք որ (Թուրքիոյ) Արտաքին Գործոց Նախարարին ասած էք. «Եթէ Ձեր Վսեմութիւն կը կարծէ թէ օգտակար կը լինի, կ'երթամ մինչև Ձեր Փատիշահին և կ'ասեմ իրեն որ եթէ չանսայ խրատին իւր նախարարաց որք կը ջանան փրկել երկիրն դիւին ձեռքէն, Թուրքիոյ համար գէշ պիտի լինի։» Նախարարութիւնս չի տեսներ թէ ճշդիւ ինչ ասել ուզեր էք «Թուրքիոյ համար գէշ պիտի լինի» յայտարարութեամբ։ Բայց ինչ ալ որ լինի միտքն, կը կարծուի թէ ամբողջ յայտարարութիւնն այս կառավարութեան կողմանէ օսմանեան գործոց միջամտելու արամադրութեան կ'ակնարկէ, ինչ որ մեր շահն չէ և ոչ քաղաքականութիւնն։»

Հայկական կոտորածի յուզմունքէն յետոյ, Մավրոյէնի Պէյ անսովոր խնդիրք երկու անգամ մատուցած է Ուօշինկթընի կառավարութեան որ Թուրք իշխանութեանց յանձնուին այն օսմանեան հպատակներն որք կը հրատարակեն կամ կը ջանան հրատարակել այս երկրի լրագրաց մէջ յօդուածներ կամ տետրակներ՝ թրքական կայսրութեան վերայ յայտնի չարամտութեամբ յարձակելով, կամ անոր նկատմամբ սուտ տեղեկութիւններ տարածելով տեղական մամլոյն մէջ։ Մավրոյէնի պատասխան տրուեցաւ թէ «Մեր դրութեան մէջ գործադիր իշխանութիւնը չունի այն զօրութիւն զորոյ գործադրութիւն կը խնդրէք, և ամենեւին կարող չէ ամբաստանեալ անձ մի յանձնել օտար կառավարութեան մի, բայց միայն արտաքսման դաշնադրեալ պայմանաց համեմատ օրինական գործողութիւն կատարուելէ յետոյ, երբ դատական ապացոյցներով հաստատուի թէ ամբաստանեալ անձն արդարեւ մասնաւոր յանցանք մի գործած է պահանջող երկրին մէջ։»

Թուրք իշխանութիւնք շատ նեղութիւն տուած են Ամերիկեան քաղաքացի-

ներու ի Թուրքիա, և այդ ևս երկար թղթակցութեան նիւթ եղած է։ Պետական քարտուղարն գրած է առ Թէրէլ. «Այս կառավարութիւնն լիովին յարգելով հանդերձ Թուրքիոյ վեհապետական իրաւունքը նկատմամբ առարկելի օտարականաց մերժման կամ արտաքսման, կրկին և կրկին ծանուցած է իւր դիրքն վերաբերութեամբ Թուրքիոյ ոևէ հնարաւոր պահանջմանն որով իւր նախկին հպատակները պատժել ուզէ այն հիման վերայ թէ նոքա ամերիկեան քաղաքացութիւն ընդունած են մեր օրինաց պատշաճ գործողութեամբ։ Այդպիսի յաւակնութեան թոյլ չեմք կրնար տալ, և դուք պարտիք կորովալիր կերպով դիմախօսել եթէ լրջօրէն այնպիսի բան առաջարկեն։» ՍԸՆ

ԿԵԴՐՈՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆ

ՆԻՈՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ

Ապրիլ 28ին Նիու Եորքի ազգայիններէն եօթն անձինք ի մի վայր գալով խորհրդակցութիւն կատարեցին թէ արդեօք կեդրոնացման գաղափարն իրականացուցանելու համար ի՛նչպէս աշխատիլ պարտէր։ Սոքա առ այժմ իբրեւ յանձնախումբ կազմակերպուեցան ընտրելով ատենապետ զՏր. Ա. Այվազեան և քարտուղար զՏր. Ա. Իշխանեան։

Այս յանձնախմբի փափաքն է նախ մշակել ծրագիր մի, թէ ինչ կերպով Ամերիկայի մէջ գտնուող կեդրոնական ընկերութիւններն կրնան դաշնակցիլ, և ինչ կերպով Եւրոպիոյ մէջ գտնուող նոյնպիսի ընկերութիւնք կրնան դաշնակցիլ իրարու, այնպէս որ բոլոր այս դաշնակցեալ ընկերութիւնք, Եւրոպայէն և Ամերիկայէն, երեսփոխաններ յղելով մի ընդհանուր ժողով անեն յԵւրոպա և ընտրեն մի քանի անձինք իբրեւ բովանդակ դաշնակցութեան կեդրոնն ու ներկայացուցիչն։

Ամերիկայի մէջ կազմուած այն ընկերութիւնք որք այս շարժման մասնակցիլ կ'ուզեն, կրնան գրել առ Տր. Ա. Իշխանեան, յանձնախմբի քարտուղարն, և յայտնել իրենց խորհուրդ, կամ, եթէ ունին, հաղորդեն կանոնագրութիւն և ծրագիր, որպէս զի գործն փութով յառաջ մղուի։ Հասցէն է Dr. A. Ishkanjan, 249 W. 34th St.

Բնաղաքիս մէջ վերջին ամիսներս ոմանք ուրի՛շ եղանակաւ փորձեցին կեդրոնացման հասնիլ, բայց անյաջող մնացին։ Տիար Պօղոս Յակոբեան, բանիմաց ազգային մի, ատենապետ և ջանադիր էր այդ ժողովներու մէջ, որք յանգեցան ապարդիւն։ Երկու շաբաթէ ի վեր Տիար Հ. Բիրէճեան, որ Արևմտեան նահանգներէ եկած է, նոյն կերպն փորձել սկսած է, դարձեալ Հայոց ժողով կոչելով և խնդրելով որ իրենց ներկայացուցիչ յանձնախումբ մի ընտրեն։ Փորձառուներն կ'ասեն նմա թէ ինչո՛ւ կերպն անյաջող եղած է ու պիտի լինի նորէն։ Լաւ է որ ժողովուրդն ևս իմանայ։

Ժողովուրդն մեծ մասամբ բարի նպատակաւ ժողովի կուգայ, և կը փափաքի որ ազգային գործոյ իւր դրամով և քուէով օգնէ եթէ կրնայ օգնել։ Ժողովրդի առաջնորդներն այդ մասին վստահ են, բայց ուրիշ դժուարութիւն մի կայ։ Եւ դժուարութիւնն այս է որ ժողովուրդն առիթ ունեցած չէ առաջնորդներուն ամենն ալ լաւ ճանաչել։ Մարդ մի ընդհանուր ժողովի մէջ կրնայ շողոքորթ կամ լեզուանի բացատրութեամբք համակրելի, բարեմիտ և հաւկացող երեւիլ ժողովրդին, բայց երբ իբրեւ գործիչ կը մտնէ յանձնախմբի մէջ, հոն է որ իւր յոսի կողմերն երեւան կ'ելնեն։ Նա բուն ազգային հպատակին ծառայելու հոգ չունենալով՝ պէսպէս կրից կը ծառայէ, կը մեքենայէ, դժուարութիւններ և խռովութիւններ կը յարուցանէ և բովանդակ յանձնախմբին ժամանակն ու սիրտն հատցնելով՝ կը քայքայէ զայն։ Այս բանն այնքան անգամ կրկնուած է մեր մէջ, որ անկեղծ հայրենասէրներն յաճախ յուսահատելու եղած են, բայց չեն ուզեր հրապարակաւ ելնել այս կամ այն անձին վատութիւնն քարոզել ժողովրդին։ Իրաւ է թէ ժողովուրդն ալ կը ճանաչէ վերջապէս վատն, բայց շատ տարիներ կ'անցնին մինչև որ ճանաչէ, և մինչև որ զմին ճանաչէ, ուրիշներ կը մտնեն ներս իբրև քար գայթակղութեան։

Ի՞նչ է ասոր դարմանն։ Կարծեմք թէ լաւագոյն դարմանն այն է զոր Տր. Այվազեանի ատենապետութեամբ կազմեալ նոր յանձնախումբն ձեռք առած է. այն է զի՝ բար փորձած և իրարու վստահող եօթն կամ տասն առաջնորդներ ինքնին կազմ-

ուին յանձնախումբ, մշակեն ծրագիրն, և ապա ժողովրդին դիմեն, մեծ ընկերութիւն մի կազմելու ընթացքով։ Այս նոր կերպն նպատակ ունի ոչ թէ ժողովրդէն իրոյս տալ, այլ խառնակիչ և քայքայիչ գործակիցներէ ազատ մնալ։ Եւ վստահ եմք թէ ժողովուրդն յետոյ շատ գոհ պիտի մնայ այս կերպէն։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻ

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՆ և ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ։ «Թայմզի» Թղթակիցն «Նոր Ազատ Մամուլ» Վիէննայեան թերթին խմբագրականէն հետեւեալ քաղուածն կը հրատարակէ. «ԹԱՅՄԶի երկար նկարագիրը չատ ճշմարիտ կը թուի։ Բաւական սոսկալի է մարդկային ամեն զգացում ցնցելու և ամչնալ տալու համար այն գազանային անգթութեան վերայ որոց ընդունակ են մարդիկ։ Թուրք կառավարութեան բարոյական պատասխանատուութիւնն անբաւ է։ Յառաջ բերուած ահաւոր ամբաստանութիւնք ուղղուած են նորա կանոնաւոր գնդերուն և ոչ թէ ֆըրդաց դէմ։ Եթէ միայն կէսն— նոյն իսկ մէկ տասներորդ մասն— այս ամօթալի յայտնութեանց ճշմարիտ են, չատ ի դէպ է հարցնել թէ Դուռն ինչ պիտի անէ քաղութեան համար։ Զհայս հաշտեցուցնել չէ խնդիրն այլ գոհացում տալ Հանրային կարծեաց Եւրոպոյ։ Ողջոյն պատմութիւնը անճշմարիտ է ասելով չի կրնար պըրծիլ։ Թուրքիա ի վտանգի է կորուսանելու ամենայն համակրութիւն և օտարացուցնելու իւր վերջին բարեկամներն այն պահուն երբ Ֆռանսա հետամուտ է Ռուսիոյ բարեկամութեան և Անգլիա աւելի բարձր արժէք կընծայէ իւր դրիցն յԵգիպտոս քան իւր ազդեցութեան յափունը Պոսֆորի։

«Տէյլի Նիւզի» կը հեռագրեն թէ Սուլթանի նորահռչակ ներողութեան վերայ՝ հինգ ուրիշ եկեղեցականներ ևս ի Կ. Պոլիս հասած են Իսկէնտէրունէն ուր աքսորուած կը մնային։ Յերուսաղէմ աքսորուած Գեր-Եղնիկ եպ. աւելի առաջ հասած էր ի մայրաքաղաքն։

Լոնտոն, 24 Ապրիլ.— «Տէյլի Նիւզի» կը հեռագրեն Կ. Պոլսէն թէ Ուէպէն անուն Ամերիկացի մի անցեալ Մարտ ամսում Ղօնեայի մօտ ձրրբակալուած և դէպ ի Պրուսա հետի տարուած լինելով, Պրուսայի մէջ մեռեր է չարաչար յոգնութենէն։ Միացեալ Նահանգաց դեսպանն կը հետազօտէ այժմ այս դէպքն։

«Տէյլի Նիւզ» ևս հրատարակած է մեր Հնդկաբնակ ազգայնոց որոշմանց օրինակն որ Անգլիոյ և միւս Եւրոպեան կառավարութեանց յղուած էր։

Թահսին փաշա, արիւնարբուն, Բաղիշոյ նախկին նահանգապետն, որ 4 հազար լիրայի պարտքով պաշտօնի գլուխ անցած էր, 70 հազար լիրայով վերադարձեր է, գումար զոր իւր նահանգի Հայերէն զօշաքաղեր է։

LES NOUVELLES D'ORIENT
(Ֆռանսերէն շաբաթաթերթ հակաթուրք)
կը բաղկանայ 8 երեսէ
տարեկանն է երկու տոլար
Հասցէ— 80 Rue de Bondy, Paris.

«Լէ Նուվէլ տ'Օռիանէ» կը տեղեկանամք թէ Եալօվայում, Պայրամի տօնի առեն, արիւնահեղ ընդհարում տեղի ունեցած է Թրքաց և Հայոց միջև։ Երկու հոգի ոպաննուած են, և մի քանիք վիրաւորուած։

«Հայկական ճգնաժամին» վերայ Ն. Ե. Թրիպիուն ևս, ի մէջ այլոց, գրաքննութիւն մի հրատարակեց։ Թրքաշունչ և չպիտոյ «Հէրալտ» դեռ չի յիշատակեր զայն։

«Հայրենիք» կը ծանուցանէ թէ Ամերիկայի Հայոց հովիւ Տ. Մ. Վ. Տէրունեան հրաժարած է և պիտի վերադառնայ ի Կ. Պոլիս։

Ուօշինկթընի «Փոսթին» մէջ կը կարդամք Թուրքիոյ մէկ նոր և անհեթեթ առաջարկութեան մասին, որով օսմանեան դեսպանն խնդրեր է Ամերիկայի կառավարութենէն Թրքաց յանձնել այն օսմանեան հպատակներն որք թուրք կառավարութեան աննպաստ յօդուածներ կը հրատարակեն այս երկրի ազատ մամլոյն մէջ։ Տիար Տիգրան Վարժապետեան այդ առթէն օգուտ կը քաղէ մի նոր և զկծեցուցիչ ապտակ մատակարարելու Մավրոյանի Պէյին ու թուրք պաշտօնէութեան, որոց

կեղծաւորութեան կը հաւասարի նաև խորին տգիտութիւնն ի մասին ազատ երկրաց սովորութեանցն և ոգւոյն։

Սուրապայայէն կը գրեն մեզ։

Ազնուամիտ Տիկին Սաթենիկ Եդգար որ անգլիական լեզուին և գրականութեան հմտութեամբն պատիւ բերէ իւր սեռին բարձր դասուն, ճշմարիտ կարեկցութեամբ լցուած առ անմեղ զոհ գնացածներն թրքաց վայրագութեանց, բուռն եռանդեամբ ձեռնարկել է դրամական նպաստս հաւաքել հեռաւոր և մերձաւոր մերազնէից յօգուտ Սասնոյ թշուառ որբոց և այրեաց։ Մխիթարական է լսել թէ Կալկաթայի և Սինկափորայ պատուելի մերազնեայք նոյն նպատակի համար դարձեալ հանգանակութիւն առնեն։

Պուլկարիոյ Պուրկազ քաղաքէն կը ծանուցանէ մեզ մի պաշտօնական գրութիւն թէ ԱՍԻԱՆԱՁԵԱՆ անուն ընկերութիւն մի կազմուած է, որոյ նպատակն է հայ յեղափոխական խմբից նիւթապէս և բարոյապէս օգնել։ Ատենադպիրն է Տիար Յ. Աւագերիցեան։

Փէթէրսըն քաղաքէն կը ծանուցանեն թէ «Յոյս Յարութեան Հայոց» անուն ընկերութիւնն իւր երկրորդ տարեդարձն կատարեր է փայլուն կերպով։

Ուօքէկէնէն կը գրեն մեզ

Երեք տարի առաջ հոս 200 հայ գործաւորներ կային, բայց երբ գործերն ընդհանուր գիշցան, թիւն 40ի իջաւ։ Հիմա կան 55, որոց բոլորն ալ կը գործեն։ Ամենս մի և նոյն գործարանին մէջ եմք, կէս օրին պարապայ ժամ մ'ունիմք երբ կրնամք խօսակցիլ ալ։ Մեր մէջ չատ բանիմաց մարդ չկայ, կազմակերպուած չեմք, բայց կռիւ ալ չկայ։ Երբեմն Շիքակոյէն կուգան որոմ ցանել բայց չի բուսնիր։ Վեհ. Հայրապետին կոնդակն երբ կարդացինք, անցեալ տարի, 21 ոսկի և 6 շիլին հանգանակելով յղեցինք Նմին Օծութեան, յետոյ 5 տոլար Մշակի խմբագրին միջոցաւ։ Սասնոյ կոտորածէն յետոյ հոս ալ մէս-միթինկ եղաւ և մեք 70 տոլար հանգանակելով Շիքակոյի Յանձնախմբին ուղարկեցինք։ Դարձեալ Սասնոյ թշուառացեալներուն յօգուտ 22 անգլ. ոսկի հանգանակելով, Ապրիլ 15ին, յղեցինք Կաթողիկոսին որ Սասունի արկածելոց բաշխէ։ Առաջին 21 ոսկին 1894 Յունիս 19ին ճանբեր էինք։ Հ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Փոլըմպըս քաղաքին մէջ ժողովական եկեղեցեաց համաժողովին մեր հայրենակիցներէն մին խօսած է Հայոց վերայ, և ժողովն քուէարկած է որոշում մի որով կը հռչակէ Պէռլինի Դաշնագրոյ 61դ յօդուածին գործադրութեան հարկն։

Թրոյէն կը գրեն մեզ թէ Տիար Յ. Գ. Ս. քաղաքին Աւետարանական եկեղեցեաց մէջ Հայոց վերայ կը բանախօսէ և Ամերիկացիք մեծ համակրանօք և սիրով կը լսեն։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Կը խնդրուի ՀԱՅՐի Բուլանիոյ և Պուլկարիոյ պատուարժան բաժանորդներն կամ բաժանորդ գրուիլ փափաքողներէն, որ հաճին փութացնել իրենց բաժանորդագներն Տիար Գառնիկ Տէօքմէճեանի, մեր գործակալին ի Ռուճուք։

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցուներու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄՆ կրնայ գնուիլ թղթակազմն 60 սէնթի, լաթակազմն մէկ տոլարի, բուն հրատարակչէն, և կամ, ի մեծագոյն դիւրութիւն մեր հայրենակցաց, մեր ազգային Տոքթոր Այվազեանի դիմել, սապէս։—

Dr. A. Ayvazian
424 West 57th St., New York, N. Y.

Պատ Մ. Զ. Գաբրիէլեան, Ֆիլատէլֆիացին, հրատարակած է տետրակ մի, 48 երեսէ բաղկացած, անգլիերէն լեզուաւ «The Armenian Question & The Massacres of the Christians» խորագրով։ Գինն է 10 սէնթ։ Գնել փափաքողներն պարտին դիմել հեղինակին սա հասցէին,

Rev. M. C. Gabrielian M. D.
925 N. 13th St., Philadelphia, Pa.

M. S. T. NAHIGIAN,
IMPORTER AND EXPORTER.
Also
Banker and Steamship Agent.
P. O. BOX, 478-

Worcester, Mass., U. S. A. April 30; 1895.

Սիրելի Հայրենակիցք,

Մեր գործին 14րդ տարին յաջողութեամբ թեւակոխած եմք։ Մեր անցեալ տարիներու գործունէութիւնն և հանրածանօթ հաւատարմութիւնն, որով միայն յարգելի յաճախորդաց գոհունակութեանն և քաջալերութեանն իրաւամբ արժանացած եմք։ Ապագայում ևս առաւել դիւրութիւններ ի ձեռին, շարունակելի լինիլն խոստանալու պէտք չկայ։

Ուստի շնորհակալութիւնս յայտնելով մեր յարգելի յաճախորդաց վասն անցելոյն, կը յուսամք և կ'ակնկալեմք որ մեր հայրենակիցներ առ հասարակ, մեր անցեալն գրաւական առած պիտի բարեհաճին մեր հետ գործ ընելվստահ լինելով թէ ամենադիւրին և ամենապահով և ամենակարճ միջոցներ ունիմք զիրենք գոհացուցանելու, և յաճախորդաց կարեւոր դիւրութիւններ ընծայելու համար, հեռագրով կամ փոխ-գրով դրամ ուղղակի փոխադրելու կարգադրութիւն ըրած եմք պատուաւոր վաճառականներու հետ հետեւեալ քաղաքաց մէջ.

Կ. ՊՈԼԻՍ — ԽԱՐԲԵՐԴ

ԶՄԻՒՌՆԻԱ, ՊԷՐՈՒԹ, ԻՍԿԷՆՏԷՐՈՒՆ, ՀԱԼԷՊ, ԱՑՆԹԱՊ, ՄԷՐՏԻՆ, ՏԻԱՐՊԷԲԻՐ, ՄԱԼԱԹԻԱ, ԱՐԱԲԿԵՐ, ԱԿՆ, ԵՐԶՆԿԱՑ, ԿԻՒՐԻՆ, ԿԱՐԻՆ, ՎԱՆ, ԲԱՂԷՇ, ՄՈՒՍՈՒԼ, ԷՍԿԻ ՇԷՀԻՐ, ԿԵՍԱՐԻԱ, ԿԻՐԱՍՈՆ, ՍԱՄՍՈՆ, ՍԵԲԱՍՏԻԱ, ԵՈԶԿԱԹ, ԷՆԿԻՒՐԻՒ, ՊԱՂՏԱՏ։

Վերոյիշեալ քաղաքներէ զատ Թուրքիոյ մէջ ուրիշ տեղեր ալ ուղղակի դրամ փոխադրելու մասին ևս թղթակցութեան մէջ եմք։ Մարսիլիոյ մէջ հայ պատուաւոր վաճառական մի կը նայի մեր գործոց որպէս գիտէք։ Նաև Եւրոպիոյ գլխաւոր քաղաքներ ևս դրամի փոխադրութեան դիւրութիւն ունիմք ապահով պանդայի մի հետ մասնաւոր կարգադրութեամբ։

Նաւատոմսի գործակալութիւնն կը շարունակեմք, և ամեն նաւային ընկերութեանց նաւերով աշխարհի ո և է կողմն դացողի համար գոհացուցիչ գներով տոմսակ կրնամք վաճառել։

Նամակաց անմիջապէս պատասխանել մեր սովորութիւնն է։

Ձերդ հաւատարմութեամբ,

Մ. Ս. Թ. ՆԱՀԻԳԵԱՆ



ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵՐՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոևէ կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՛ ածան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է։ Այնէնէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և ածան գնով։

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն ածան կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և շատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է։ Ատի ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոևէ կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետևեալ հասցէին։

Նամակներու պատասխանները շուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN
41 Exchange St. Worcester, Mass.

BUSH & Co.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

(Հաստատեալ ի 1894)

65 Front St., Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

CHEVOLA & BARALDI,
successor to
LANTELME'S RESTAURANT
40 Union Square
(East side)
Bet. 16th and 17th Sts., NEW YORK

ԱՅՍ ՃԱՇԱՐԱՆՆ ԸՆՏԻՐ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՃԱՇԱԿԱՒ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

5 և 7 E. 10դ Փողոց

5դ Էվիւնիւի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր.

CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to **MUNN & CO.**, who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A **Handbook** of Information concerning **Patents** and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive special notice in the **Scientific American**, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. $3 a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, $2.50 a year. Single copies, 25 cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address
MUNN & CO., NEW YORK, 361 BROADWAY.

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք

26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ